«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР (АРЦАХА): ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ОМУСА
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН
2016

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ
ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, ի.գ.դ., պրոֆ. **Հ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Հ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Մարգարյան**, ք.գ.դ. **Ս.Մ.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Հ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия
д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում, 2016

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԵՐԱՑՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (ԼՂՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

Աստղիկ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
վիճակագրության և բիոմետրիայի ամբիոնի դասախոս
amovsisyanm@mail.ru

Նարեկ ՀԱՅՐԻՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ, ագրոբիզնես և շուկայաբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող

Ժողովրդագրական իրավիճակի առկա հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը, որի ընթացքը հանրապետությունում հետխորհրդային տարիներին մեծապես արագացել է՝ պայմանավորված պատերազմով և դրա հետևանքներով, ծնելիության մակարդակի անկմամբ և աշխատանքային տարիքի բնակչության էմիգրացիոն ակտիվությամբ:[1]

Սույն հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել ԼՂՀ-ում բնակչության ծերացման գործընթացը, ինչպես նաև բացահայտել դրա վրա ազդող հիմնական գործոնների ազդեցությունը:

Բնակչության ծերացումը կամ ժողովրդագրական ծերացումը տարեցների և ծերերի տեսակարար կշռի ավելացումն է բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ: Բնակչության ծերացումը երակարաժամկետ ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցություններում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև մասամբ, միգրացիայի հետևանք է:

Բնակչության ծերացումը տեղի է ունենում բնակչության սեռատարիքային բուրգի ներքևից, երբ նվազում է ծնելիության մակարդակը և բնակչության սեռատարիքային բուրգի վերևից՝ որպես կյանքի սպասվող միջին տևողության երկարացման և ցածր ծնելիության պայմաններում տարեցների մահացության մակարդակի կրճատման հետևանք:

Եթե ծերացման ցուցանիշը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 65 և բարձր տարիքը, ապա ժողովրդագրական ծերացումը գնահատվում է ՄԱԿ-ի կողմից ընդունված ծերացման գնահատման հետևյալ սանդղակով՝

- մինչև 4%- երիտասարդ բնակչություն,
- մինչև 7%-բնակչությունը գտնվում է ծերացման շեմին,
- 7% և ավելի - ծեր բնակչություն:

[1] ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու 2015; 6-7 էջ:

Եթե ժողովրդագրական ծերացման ցուցանիշը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 60 և բարձր տարիքը, ապա կիրառվում է Բոժե Գառնեի ծերացման սանդղակը.[1]

Աղյուսակ 1

Բոժե Գառնեի բնակչության ծերացման գնահատման սանդղակ

Փուլերը	60 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը, %	Ծերության փուլերը և բնակչության ծերացման մակարդակները
1	∠8%	Ժողովրդագրական երիտասարդացում
2	8-10	Ծերացման նախաշեմ
3	10-12	Ծերացման շեմ
4	12 և բարձր	Ժողովրդագրական ծերացում
	12-14	Ժողովրդագրական ծերացման սկզբնական մակարդակ
	14-16	Ժողովրդագրական ծերացման միջին մակարդակ
	16-18	Ժողովրդագրական ծերացման բարձր մակարդակ
	18 և բարձր	Ժողովրդագրական ծերացման ծայրահեղ բարձր մակարդակ

[1] **Медков В.М.** Демография. Ростов на Дону. 2004. Ст. 130-132:

Գծապատկեր 1-ում ներկայացված է ԼՂՀ բնակչության ծերացման գործակցի դինամիկան 2005-2014թթ.:



Գծապատկեր 1. ԼՂՀ-ում 60 և բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ 2005-2014թթ.%,[1]

Գծապատկեր 1-ում ներկայացված տվյալներից երևում է. որ ուսումնասիրվող ժամանակահատվածում 60 և բարձր տարիքի անձանց տեսակարար կշռի միջին տարեկան բացարձակ հավելաճը կազմել է 0.06%: Ծերացման գործակցի առավելագույն մակարդակ գրանցվել է 2009թ-ին՝ 16.90%, որը 2005թ-ի համեմատությամբ ավելացել է 1.1 անգամ, իսկ 2014թ-ին 2005թ-ի համեմատ ավելացել է 1.05 անգամ:

Վերը նշված բնակչության ծերացման սանդղակների համաձայն՝ ԼՂՀ բնակչությունն ընդհանուր առմամբ համարվում է ծեր, մասնավորապես ըստ Բոժե Գառնեի սանդղակի ԼՂՀ-ն համարվում է ժողովրդագրական ծերացման բարձր մակարդակ ունեցող երկիր:

ԼՂՀ բնակչության ծերացման վրա ազդող հիմնական գործոնների բացահայտման նպատակով իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն: Որպես գործոնային հատկանիշներ ընտրվել է կյանքի սպասվող միջին տևողությունը, բնակչության ընդհանուր հավելաճն ու բնական հավելաճը:

[1] ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու 2015, էջ 18-21:

Աղյուսակ 2

ԼՂՀ բնակչության ծերացման գործակիցը, կյանքի սպասվող միջին տևողությունը և բնակչության ընդհանուր և բնական հավելաճը 2005-2014թթ.[1]

Տարիներ	Բնակչու-թյան ծերացման գործակիցը, % (y_t)	Կյանքի սպասվող միջին տևողու-թյունը, տարի, (x_1)	Բնակչու-թյան ընդհանուր հավելաճը, հազար մարդ, (x_2)	Բնակչու-թյան բնական հավելաճը, հազար մարդ, (x_3)
2005	15.32	70,6	0,5	0,744
2006	15.25	69,6	0	0,867
2007	15.92	71,8	1,1	0,918
2008	16.30	73,2	1,1	1,101
2009	16.90	73,5	1,5	1,555
2010	16.30	73,9	2,2	1,353
2011	16.10	73,4	1,1	1,289
2012	16.10	74,6	1,9	1,268
2013	16.07	73,5	1,5	1,027
2014	15.85	74,2	0,8	1,119

ԼՂՀ բնակչության ծերացման գործակցի և նշված գործոնների միջև զույգային ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալներից երևում է, որ կառուցված ռեգրեսիոն մոդելները և ստացված ռեգրեսիայի գործակիցները կարող ենք համարել նշանակալի:

ԼՂՀ բնակչության ծերացման գործակցի և ընտրված գործոնների միջև կապը ուղիղ է և ամուր:

[1] ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու 2015, էջ 18-21, ԼՂՀ վիճակագրական տարեգիրքը 2006-2012թ., էջ 40, ԼՂՀ վիճակագրական տարեգիրքը 2008-2014թ., էջ 11, 41:

Աղյուսակ 3

ԼՂՀ բնակչության ծերացման գործոնային
վերլուծության հաշվարկային արդյունքները

Գործոնային հատկանիշի անվանումը	Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները
Կյանքի սպասվող միջին տևողության	$\hat{y}_t = 0.481 + 0.213\,x_1$ (2.99), $R = 0.727$; $R^2 = 0.529$; $F = 8.910.1$
Բնակչության ընդհանուր հավելաճի	$\hat{y}_t = 15.37 + 0.545\,x_2$ (3.09), $R = 0.738$; $R^2 = 0.544$; $F = 9.55$
Բնակչության բնական հավելաճ	$\hat{y}_t = 14.08 + 1.713\,x_3$ (5.34), $R = 0.884$; $R^2 = 0.781$; $F = 28.5$
t և F չափանիշների կրիտիկական արժեքները	$t_{crit}(\alpha = 0.05; k = 8) = 2.3$; $F_{crit}(\alpha = 0.05; k1 = 1; k2 = 8) = 5.38$

Համաձայն ռեգրեսիոն մոդելի՝ կյանքի սպասվող միջին տևողության մեկ տարով ավելացումը նպաստել է բնակչության ծերացման գործակցի 0.213%-ով աճին: և ծերացման գործակցի մակարդակների տատանումների շուրջ 52.9%-ը պայմանավորված է կյանքի սպասվող տևողության տատանումներով:

Վերլուծության արդյունքներից ակնհայտ է, որ բնակչության ընդհանուր հավելաճի յուրաքանչյուր 1000 մարդով ավելացման դիմաց բնակչության ծերացման գործակիցն աճել է 0.545%-ով, իսկ բնական հավելաճի յուրաքանչյուր 1000 մարդով ավելացմանը զուգահեռ՝ 1.713%-ով, ծերացման գործակցի մակարդակների տատանումների շուրջ 78.1%-ը պայմանավորված է բնական հավելաճի տատանումներով:

Այսպիսով, արդյունքները վկայում են, որ ԼՂՀ-ում բնակչության ծերացումը հիմնականում պայմանավորված է մահացության ցածր մակար-

դակով: Բնակչության երկարակեցությունը և մահացության ցածր մակարդակը փաստում են ԼՂՀ առողջապահության ոլորտի ծառայությունների բարձր որակի, շրջակա միջավայրի աղտոտվածության ցածր մակարդակի և ազգային առանձնահատկությունների մասին:

Աստղիկ Մովսիսյան, Նարեկ Հայրիյան

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԵՐԱՑՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (ԼՂՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

Բանալի բառեր՝ *Բնակչության ծերացում, կյանքի սպասվող միջին տևողություն, աշխատունակ տարիքի բնակչություն, ռեգրեսիոն վերլուծություն*

Ժողովրդագրական իրավիճակի առկա հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը: Բնակչության ծերացումը կամ ժողովրդագրական ծերացումը տարեցների և ծերերի տեսակարար կշռի ավելացումն է բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ: Սույն հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել ԼՂՀ-ում բնակչության ծերացման գործընթացը, ինչպես նաև բացահայտել դրա վրա ազդող հիմնական գործոնների ազդեցությունը: Կյանքի սպասվող միջին տևողության մեկ տարով ավելացումը նպաստել է ԼՂՀ բնակչության ծերացման գործակցի 0.213%-ով աճին, բնակչության բնական հավելաճի յուրաքանչյուր 1000 մարդով ավելացմանը զուգահեռ բնակչության ծերացման գործակիցը աճել է 1.713%-ով:

Астхик Мовсисян, Нарек Айриян

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ СТАРЕНИЯ НАСЕЛЕНИЯ ПО ДАННЫМ НКР

Ключевые слова: *старение населения, ожидаемая продолжительность жизни при рождении, население трудоспособного возраста, регрессионный анализ*

Одно из демографических проблем является демографическое старение. Старение населения или демографическое старение является увеличение доли пожилого населения в населении. Основной целью исследования является изучение и анализ старения населения и выявление основных факторов, влияющих на старение населения. Согласно регрессионной

модели, увеличение ожидаемой продолжительности жизни при рождении на один год приводит к увеличению старения населения на 0.213 процента. Увеличение естественного прироста населения на 1000 человек привело к увеличению старения населения на 1.713 процента.

Astghik Movsisyan, Narek Hayriyan

THE STATISTIC ANALISES OF POPULATION AGING BY THE DATA OF NKR

Keywords: *The population aging, life expectancy at birth, working-age population, regression analyses*

The one of the demographic problems is the demographic aging. The population aging or the demographic aging is the raising of the share of the aged population in the whole population. The main purpose of the research is to study and analyze the process of population aging and to disclose the main factors influencing on the population aging. According to the regression model the increase of life expectancy at birth by one year leads the increase of population aging by 0.213 percent. The increase of natural growth of population by 1000 persons led the increase of population aging by 1.713 percent.